

## Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### Ե Ղ Ի Թ Ե Չ Ա Ր Ե Ն Ց, «ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ»

Հայպետհրատ, Երևան, 1954 թ., 618 էջ:

1954 թվականի հոկտեմբերին Հայաստանի պետական հրատարակչությունը լույս ընծայեց սովետահայ տաղանդավոր բանաստեղծ Նդիշ Չարենցի ստեղծագործությունների մի նոր ու բովանդակալից ժողովածուն՝ «Ընտիր երկեր» ընդհանուր խորագրի տակ, ուր ամփոփված են հեղինակի լավագույն բանաստեղծությունները, բալլադներն ու պոեմները, անտիպ երկերն ու քաղվածքները:


Չարենցը մեր պոեզիայի և գեղարվեստական արձակի խոշորագույն վարպետներից մեկն է: Նա իր ստեղծագործություններով մի նոր ու պայծառ էջ բացեց հայ դրականության պատմության մեջ՝ զարգացման նոր աստիճանի հասցնելով, իբր նորարար, սովետահայ մեր պոեզիան ու արձակագրությունը:

Այս ժողովածուից դուրս են մնացել Չարենցի արձակ երկերը, «Երկիր Նաիրի»-ն և «Երևանի ուղղի տնից»-ը:

Հսկայական է Չարենցի ստեղծագործության հասարակական-գեղարվեստական նշանակությունը: Չարենցի պոեզիան գերազանցապես հասարակական բովանդակությամբ, խորը դեմոկրատիզմով, վառ հայրենասիրությամբ, ժողովրդաբնույթությամբ տոգորված ստեղծագործություն է: Այդ ստեղծագործության հմայլի բուն դադունիքը ժողովրդի մաքառման, իղձերի, երազանքների, գալիքի նկատմամբ նրա վառ ու անբեկանելի հավատի խորը և ճշմարտացի արտացոլման մեջ է:

Որպես խորապես ժողովրդական բանաստեղծ և անշահախնդիր հայրենասեր, Չարենցը հարազատորեն արձագանքել է իր Հայրենիքի, ժողովրդի, հայ իրականության գրեթե բոլոր բնորոշ երևույթներին, խորապես ապրել, տանջվել, պայքարել ու ստեղծագործել է իր ժողովրդի կյանքով ու առօրյայով, նրա հույզերով ու երազներով:

Արդարև, Չարենցի պոեզիայի ժողովրդաբնույթունը, բանաստեղծական ապրումների խորությունը, հուզականությունը, անմիջականությունը, անկեղծությունը, արտահայտչական միջոցների բազմազանությունը, ճոխ ու պատկերավոր լեզուն նրա համար ապահովել են պատվավոր տեղ հայ գրականության մեջ:



«Ընտիր երկեր»-ում ամփոփված է Չարենցի նախաստեղծական և սովետական շրջանների երկերի մի մեծ մասը, առավելապես սովետական շրջանի ստեղծագործությունները:

Չարենցի նախաստեղծական շրջանի պոեզիայի հիմնական մոտիվներից մեկը, հայ ժողովրդի բազմադարյան պատմությանը հատուկ, ազգային-հասարակական վշտի խոր ու բարձրարժեք արտացոլումն է կաղմում, նրա պոեզիան իր խորը արժաններով կապվում է հայ ժողովրդի դարավոր նվաճումների հետ: Յուրացնելով մեր մեծ կուսիկների լավագույն գրական տրագիկները, Չարենցն իր ստեղծագործության առաջին տարիներին կրկնում է մեր կուսիկների քննաներն ու մոտիվները: Նա հնչեց-

նում է «ցավի, անվախճան թախծի» մոտիվները: Բանաստեղծի հուսահատությունը, վիշտը, արձագանքն են հասարակական վշտի, հայ ժողովրդի ապրած անլուր ողբերգության, որովհետև ինքն էլ «ամենքի հետ է ապրում, ամենքի չափ տառապում»:

Իր ստեղծագործության առաջին իսկ օրերից, Չարենցին հուզում ու տազնապեցնում է հայրենի երկրի և բազմաշարշար հայ ժողովրդի բախտը: Ոսկեգիրկ, արեառա՛տ, կապուտաշյա Նաիրի՛ն ջերմացնում է նրա սիրտը: Բանաստեղծը սիրում է իր Հայրենիքն ու ժողովրդին իր հոգու ամբողջ ջերմությամբ: Հայրենիքի ջերմացնող լիրիկական սերը նա միշտ զգացել է իր մեջ, նույնիսկ երբ «մենակ էի ես, ինձ հետ էի ի դու»,— ասում է նա:

Համաշխարհային առաջին պատերազմին բանաստեղծը տեսնում է իր Հայրենիքի ավերումն ու հրեկիզումը:

«Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով...

Մեր երկիրը հին դարձրին փոշի...»

Մեր կյանքի հիմքերն անդունդը ընկան...»:

Համախաղան այդ թախծի, անկումային տրամադրությունների օրերին էլ բանաստեղծի հոգում անմար է մնացել Հայրենիքի սերը և նա «գիշերը ամ-



բողջ հիվանդ, ցավազար, երազում է արևի մասին»  
և խորհրդածում՝

«Ինչու է երազն այս աշխարհավեր

Կախվել մեր գլխին այսպես կուրորեն...»:

Հայրենասեր բանաստեղծը իր մորմոքն է արտահայտում իր ժողովրդի և Հայրենիքի ճակատագրի մասին այս տողերի մեջ: Բայց Չարենցի նախասովետական շրջանի հայրենասիրական ստեղծագործությունները ստեղծված են հայ ժողովրդի և նրա Հայրենիքի բախտորոշ ապագայի նկատմամբ ունեցած լավատեսությամբ: «Հուսահատության քողը պատռելով՝ ձյունի տակից փթթող մանիշակների պես դուրս են դալիս նրա լավատեսության դեռևս թույլ, բայց առաջին ծիլերը»:

«Օրը կգա: Եվ հեռավոր դաշտերից

Մեր հնձվորները, հոգնաբեկ, կգան տուն,

Կրողներն սեղանի շուրջը նորից

Ու կլինի հազար ծիծաղ ու խնդում»:

Խոստումնալից բանաստեղծի առաջ, իր ստեղծագործության փերթորդ փուլում, բացվում է լայն ուղի. Չարենցը նոր խոսք է բերում մեր գրականության թե՛ իր թեմատիկայով, թե՛ իր գաղափարական թափձերով ու նոր արվեստով: Նա երգում է ժողովրդի մաքրամաքն և ստեղծագործ աշխատանքի սխրագործությունը: Բանաստեղծական դյուտերի շնորհիվ, ամեն մի բանաստեղծությունն դառնում է ինքնատիպ ու ինքնուրույն ստեղծագործություն, որտեղ արտացոլվում է կյանքի մեծ ճշմարտությունը: Հենց այդ է Չարենցի երկերի գեղարվեստական ինքնատիպության գաղտնիքը այդ շրջանի երկերում: Բանաստեղծը իր հոգու բոլոր թևերով կապվում է ժողովրդի կյանքի, առօրյայի ու հաղթանակի հետ:

«Թե ուզում ես երգդ լսեն

Ժամանակի շունը դարձիր—

Կապվիր նյարդով յուրաքանչյուր

Փոփոքին ու քո գարին...»

Եվ Չարենցը դառնում է ա՜յն «աշխարհայուցի փոփոքիկների երգիչը»:

Չարենցը այդ ուղիով անցնում է ընդմիջ առգրվերդական պոեզիայի ուղին, միաձուլվում ժողովրդական մասսաների հետ, խորանում է կյանքի և նոր իրադարձությունների մեջ, հրաժարվում է անցյալի «կապույտ երգերից, մշուշից ու անկումայնությունից և ձեռնամուխ է լինում երգելու էպիկական մեծ կոտակներով ժողովրդական հերոսության՝ գեղեցկությունը, նրա անսահման ուժը, նոր կյանքի հաղթանակը, ապագայի, գալիքի վառ հավատը, երգում է աշխատավոր մարդկության համաշխարհային զարթոնքը, խաղաղության տենչը, ժողովուրդների եղբայրության գաղափարը: Բանաստեղծը խորապես համոզված է, որ ժողովուրդը, իր պայքարով, կնվաճի խաղաղությունն ու երջանկությունը:

«Ես ասում եմ՝ աշխարհը կդառնա

Մի ընդհանուր խնդրության փողոց»:

1920 թվականին գրված «Երգ ժողովրդի մասին» էպիկական պոեմում Չարենցը, պատկերելով ռուս հեղափոխական ժողովրդի կյանքը, կարողացել է ժողովրդին հանդես բերել որպես պատմություն կերտող անխորտակելի մի ուժի:

1920—1921 թվականներին Չարենցը գրում է «Ամենագրեմ»ը, որտեղ վառ ու ռեալիստական գույներով նկարագրել է Համաշխարհային առաջին պատերազմը, հայ ժողովրդի անել կացությունը, Սոցիալիստական ռեալիտեի, որ փրկություն է բերում հայ ժողովրդին և հայ աշխատավորությանը, Պոեմում առանձնահատուկ տեղ է գրավել հայ ժողովրդի ազատագրական հարցը, Պոեմը աչքի է ընկնում նաև իր նոր տաղաչափությամբ:

Չարենցը բազմաթանկ գրող է: Այս շրջանի նրա ստեղծագործության մեջ նշանակալից տեղ է գրավում բալլադը, որտեղ նա հանդես է գալիս որպես քնարական պոեզիայի տաղանդավոր վարպետ: Հովհաննես Հովհաննիսյանից, Հովհաննես Բումաճյանից հետո Եղիշ Չարենցը մեր պոեզիայի մեջ հանդիսանում է բալլադի խոշոր վարպետը: «Չարենցի բալլադները աչքի են ընկնում իրենց խոր իդեալականությամբ, հուզականությամբ և պարզությամբ»:

Չարենցը մեր մեծ լիրիկներից մեկն է: Սերը իշխող մաղան արտահայտություններով հանդիսանում է Չարենցի ստեղծագործության հիմնական մոտիվներից մեկը: Սերը նա դիտել է որպես կյանքի աղբյուր, աշխատանքի սխրագործություն, կյանքը խմսատավորող և թևավորող մի վեհ՝ զգացում: Նա երգել է կյանքը հաստատող սերը. նրա լիրիկան աչքի է ընկնում իր հուզականությամբ, բազմազանությամբ, անմիջականությամբ, տպրումների խորությամբ: 1920—1921 թվականներին նա գրել է Սույաթ-Նովայի նմանողությամբ «Տաղաբաճը», ուր գեղեցկորեն է Չարենցի ամենածողովրդական և ուշադրամբ դործերից մեկը՝ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը, որը լավագույն քնարական ստեղծագործությունն է մեր պոեզիայի մեջ: Այդ բանաստեղծությունը հայրենասիրական աշնիվ զգացումների մի ինքնատիպ պոեմ է, որտեղ բանաստեղծը կարողացել է Հայաստանի արևոտում բառը, մեր հին, լացակուրմած սաղի նվազը, արձանանման վարդերի բույրը, լուսն լճերի գույները իրար միաձուլել:

«Ընտիր երկերում» հրատարակվել են նաև Չարենցի անտիպ երկերը, որոնց թվում աչքի է ընկնում իր հուզականությամբ «Requiem aeternam»-ը (Կոմիտասի համար), ձեռագրված Կոմիտասի «Ճաշի արքա»-յի աճյունի Հայրենիք վերագրվելու պատմական դեպքին, ուր բանաստեղծը ոգեկոչում է հիշատակը հայ երգի մեծ կախարհին, որը «երգել է աշխատանքը և արորը մաճկալի, անշուր դաշտեր ու հերկեր և սիրո վերք անձկալի», և որը չի տեսել իր «երկրի արշալույսը փառապանծ, իբրև աճյուն դու եկար, իբրև դուռը տարագիր»:

Ապա եղակի այդ դեպքից Չարենցը անում է մեծ քնդհանրացում:



«Վերադառնան պիտի դեռ  
Հաղար սրտեր տարագիր  
Թողած օտար հեռուներ,  
Ցրված հողմով հարաբիրտ—  
Իբրև սրտեր կենդանի,  
Իբրև մասունք կամ աճյուն—  
Սրտեր բանի՞ դեռ, բանի՞  
Հողն են իրենց անրջում...

«Ընտիր երկերում ամփոփվել են նաև Չարենցի  
թարգմանությունները սիրած հեղինակներից՝ Էժեն  
Պոտինից, Հայրիկի Հայնից, Վիկտոր Հյուգոյից, Մ.  
Լերմոնտովից, Ն. Նեկրասովից, Ուալտ Ուիտմենից,  
Էմիլ Վերհարնից, Դեմյան Քեդրից, Նադիմ Հիրմի-

թից, Մայակովսկուց, Վոլֆգանգ Գյոթեից, Ալեքսանդր  
Պուշկինից և Մաքսիմ Գորկուց:

Չարենցի ստեղծագործական ժառանգությունը իր  
սյուսկանելի տեղն է գրավում հայ գրականության  
պատմության մեջ: Նա իր ստեղծագործություններով  
մի նոր ու պայծառ էջ բացեց հայ գրականության  
պատմության մեջ:

Չարենցի երկերը, որոնք աչքի են ընկնում իրենց  
թեմայի հարստությամբ, ձևերի, գեղարվեստական  
պրիտմների, պատկերների բազմազանությամբ, խնր-  
հատկությամբ, հայրենասիրությամբ ու ժողովրդ-  
դայնությամբ դարձել են ո՛չ միայն հայ ընթերցասեր  
հասարակության, այլ նաև սովետական ընթերցող  
լայն հասարակության ամենասիրելի երկերը:

Ա. Հ.

